«ՄԵՆԵՋՄԵՆԹ ՄԻՔՍ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ EXECUTIVE MBA ԲԻԶՆԵՍ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

25.12.2021 10:35

2021թ-ի դեկտեմբերի 23-ին «Մենեջմենթ Միքս» ընկերության executive MBA բիզնես վարչարարության ծրագրի մասնակիցները Ընկերության նախագահ Ռաֆֆի Սեմիրջյանի գլխավորությամբ այցելել են ՀՀ փաստաբանների պալատ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրերին ներկայացրեց ՀՀ փաստաբանների պալատի կառուցվածքը և գործունեության ընդհանուր ուղղությունները:

Ծրագրի մասնակիցներից շատերը, լինելով մասնագիտությամբ բժիշկներ, ներկայացրեցին իրենց մասնագիտական գործունեության հետ կապված իրավական խնդիրները:

Պատասխանելով հյուրերին հետաքրքրող հարցերին՝ Սիմոն Բաբայանը պարզաբանեց փաստաբանի մասնագիտական կարգավիճակի, Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության, փաստաբան-պետություն կապի ու փոխհարաբերությունների առանձնահատկությունները:

Հյուրերը այցելեցին նաև Փաստաբանական դպրոց, որտեղ նրանց հյուրընկալեց դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը:

Նա ներկայացրեց փաստաբանական դպրոցի առաքելությունը, փաստաբան դառնալու ուղին, ուսումնական գործընթացը, կրթության որակի ապահովման մեխանիզմները:

Ընդունելության վերջում հյուրերը շրջայց կատարեցին Փաստաբանների պալատի վարչական շենքում:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })